



Հաստատված է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գոծադիր կոմիտեի 2019թ. հոկտեմբերի 29-ի համար 5 նիստի որոշմամբ

## **2018-2019թթ. ՄՐՑԱՇՐՁԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

### **Հոդված 1. Կանոնակարգի շրջանակները**

Սույն կանոնակարգով կարգավորվում է՝

- ՀՖՖ-ի կողմից անցկացվող ֆուտբոլի կանանց առաջնության կազմակերպման և անցկացման գործընթացը,
- Առաջնությանը մասնակցելու կարգը և պահանջները,
- Առաջնությանը մասնակցող ֆուտբոլային ակումբների (թիմերի) իրավունքներն ու պարտականությունները:

### **Հոդված 2. Առաջնության նպատակը**

1. Նպաստել կանանց ֆուտբոլի զարգացմանը և մասսայականացմանը:
2. Նպաստել ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստականության բարձրացմանը:
3. Ի հայտ բերել մրցաշրջանի մրցանակակիրներին:
4. Ստուգել և գնահատել մրցաշրջանում թիմերի կատարած աշխատանքը:
5. Նպաստել միջազգային մրցաշարերում ազգային հավաքականի ելույթներին:

### **Հոդված 3. Առաջնության խնդիրները**

1. Դասակարգել Ա և Բ խմբերի թիմերը ըստ խաղերի արդյունքների:
2. Ա խմբի 2018-2019թթ. մրցաշրջանում վերջին տեղը գրաված թիմը 2019-2020թթ. մրցաշրջանում անցնում է Բ խումբ:
3. Բ խմբի 2018-2019թթ. մրցաշրջանում առաջին տեղը գրաված թիմը 2019-2020թթ. մրցաշրջանում անցնում է Ա խումբ:

### **Հոդված 4. Առաջնության ղեկավարումը և վերահսկողությունը**

Առաջնության ղեկավարումն իրականացնում է ՀՖՖ-ն՝

- հաստատում է առաջնության կանոնակարգը և խաղացանկը,
- իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
- հոգում է թիմերի սննդի և տրանսպորտային ծախսերը,
- ամփոփում և հաստատում է առաջնությունների արդյունքները,
- իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,
- իրականացնում է կանոնակարգից բխող այլ գործառնություններ:

### **Հոդված 5. Մրցումները և մասնակից թիմերը**

Կանանց ֆուտբոլի 2018-2019թթ. մրցաշրջանի մրցումները ընդգրկում են Ա խմբի առաջնություն, Բ խմբի առաջնություն և Գավաթի խաղարկություն:

Ա Խմբի առաջնությանը մասնակցում են հետևյալ ակումբների թիմերը:

<b>Ակումբ</b>	<b>Թիմ</b>
1. Հայ աղջիկներ	Գուլգ-Գորիս
2. Լ.Հայրապետյան	Անի-1
3. Գ.Մկրտչյան	Անի-2
4. Արթիկի ֆմ/դպ	ԱՖԴ-Հոմենմեն
5. Ս.Անտոնյան	Արփի
6. Տրիբունա ՀԿ	Գյումրի 1

Բ Խմբի առաջնությանը մասնակցում են հետևյալ ակումբների թիմերը:

<b>Ակումբ</b>	<b>Թիմ</b>
1. Տրիբունա ՀԿ	Գյումրի-2
2. Տրիբունա ՀԿ	Գյումրի-3
3. Հայ աղջիկներ	Գոլգ-Եղեգնաձոր
4. Բերդավանի գ/գ կ-ն	Թխաձոր
5. Ա.Արզումանյան	Անի-3
6. Հրազդանի մ/պ մ/դ	Թեղենիս

Գավաթի խաղարկությանը մասնակցում են Ա և Բ խմբերի առաջնությունների մասնակից բոլոր թիմերը: Գավաթի խաղարկության կանոնակարգը ներկայացված է հավելված 1-ում:

### **Հոդված 6.Մրցումների անցկացման կարգը**

1. Առաջնության խաղերը անցկացվում են 2 խմբով (Ա և Բ):

Ա և Բ խմբերի խաղերը անցկացվում են շրջանաձև մրցակարգով՝ 2 շրջանով (սեփական և մրցակցի դաշտերում) մեկ շաբաթական ցիկլով՝ 2018թ.

նոյեմբեր ամսից մինչև 2019թ. ապրիլ ամիսը ներառյալ:

2. Թիմերը մրցաշարային աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Հաղթանակ՝ 3 միավոր, ոչ-ոքի՝ 1 միավոր: Պարտության դեպքում միավոր չի հաշվարկվում:

3. Երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը հավակնորդ թիմերի միջև խաղերում՝

ա) վաստակել է ավելի շատ միավոր,

բ) ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) խփել է ավելի շատ գոլ,

դ) կնշանակվի «ոսկե խաղ»

## **Հոդված 7. Խաղերի կազմակերպումը և ընդհանուր պարտականություններ**

1. Ա խմբի խաղերին մասնակցում են 1999-2004 թթ. ծնված ֆուտբոլիստուհիները (այսուհետ ֆուտբոլիստները): Ա խմբի խաղերին միննույն ժամանակ թույլատրվում է խաղադաշտում գտնվել 1998 թվականին կամ ավելի ցածր, ինչպես նաև 2005 թվականին կամ ավելի ուշ տարիներին ծնված ընդամենը 4 ֆուտբոլիստ ովքեր գրանցված են տվյալ ակումբում:
2. Բ խմբի խաղերին մասնակցում են 1999-2006թթ. ծնված ֆուտբոլիստները, ովքեր գրանցված են տվյալ ակումբում: Բ խմբի խաղերին միննույն ժամանակ թույլատրվում է խաղադաշտում գտնվել ընդամենը 3 ֆուտբոլիստի 1997 կամ ավելի ցածր թվականին ծնված:
3. Թիմերի մարզիչները պատասխանատվություն են կրում ֆուտբոլիստների առողջական վիճակի համար: Առողջական վիճակի գնումը կատարվում է խաղաշրջանը առնվազն մեկ անգամ:
4. Մարզիչները պարտավոր են խաղը սկսվելուց 20 րոպե առաջ խաղի լրացված և ստորագրված արձանագրությունը հանձնել մրցավարին:
5. Ա խմբում արձանագրության մեջ լրացվում է առնվազն մեկ մարզիչ, մինչև 18 ֆուտբոլիստ՝ 11 հիմնական և 3-7 պահեստային:  
Բ խմբում արձանագրության մեջ լրացվում է մարզիչ, մինչև 18 ֆուտբոլիստ՝ 11 հիմնական և 3-7 պահեստային:
6. Խաղի արձանագրությունում լրացվում են այն ֆուտբոլիստների և պաշտոնյաների անունները, ովքեր հայտավորված են թիմում:
7. Ա և Բ խմբում բժշկական ծառայությունը ապահովում է ընդունող թիմը:
8. Խաղերի տևողությունը՝  
Ա խմբում 90 րոպե (45+45 րոպե) մինչև 15 րոպե ընդմիջում  
Բ խմբում 60 րոպե (30+30 րոպե) մինչև 10 րոպե ընդմիջում:
9. Խաղին հայտավորված յուրաքանչյուր ֆուտբոլիստ, այդ թվում դարպասապահը պետք է ստանա նվազագույնը 20 րոպե խաղային ժամանակահատված:
10. Չհայտավորված, որակազրկված, արձանագրությունում չնշված ֆուտբոլիստ խաղին մասնակից դարձնելը արգելվում է:
11. Կանոնակարգի դրույթների խախտման համար պատասխանատվությունը կրում է թիմի մարզիչը: Կարգապահական պատժամիջոցները կիրառվում են ՀՖՖ Կարգապահական կոմիտեի որոշմամբ Կարգապահական կանոնակարգով նախատեսված դեպքերում և սահմաններում:

## **Հոդված 8. Խաղերի սպասարկման իրականացումը**

1. Խաղերի անցկացման համար ՀՖՖ-ի մրցավարական բաժինը նշանակում է սպասարկող կազմ՝ մրցավար և մրցավարի երկու օգնականներ:
2. Յուրաքանչյուր խաղից 20 րոպե առաջ հանդիպման մրցավարը անցկացնում է նախադային խորհրդակցություն, որին մասնակցում են թիմերի մարզիչները:
3. Մրցավարը պարտավոր է կատարել խաղի կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր գործառույթները: Խաղից հետո մրցավարը պարտավոր է արձանագրությունը ներկայացնել մրցավարական բաժին մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00:
4. Խաղի ընթացքում տեխնիկական գոտում պետք է ներկա լինի խաղի արձանագրությունը ստորագրած մարզիչը: Առանց թիմի մարզչի խաղը չի անցկացվում:

## **Հոդված 9. Առաջնության մասնակիցների հայտավորումը**

1. Մասնակիցների հայտավորման համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված ձևը: Հայտավորումը սկսվում է 2018թ. հոկտեմբերի 4-ին և վերջանում է հոկտեմբերի 29-ին:
2. Մարզիչները հայտի հետ միասին պարտադիր պետք է ներկայացնեն նաև ֆուտբոլիստների ֆուտբոլային անձնագրերը:
3. Հայտավորվող ֆուտբոլիստները պետք է գրանցված լինեն տվյալ ակումբում:
4. Թույլատրվում է հայտավորել մարզիչ, բժիկ, ադմինիստրատոր և պարտադիր 18-25 ֆուտբոլիստներ, այդ թվում տվյալ թիմից Մ-19 հավաքականում ընդգրկված ֆուտբոլիստներ:
5. Ակումբը չի կարող հայտավորել մարզչի, որը՝ գործող ֆուտբոլիստ է և հայտավորված է նույն խմբում հանդես եկող միևնույն կամ այլ թիմում որպես ֆուտբոլիստ:

## **Հոդված 10. Պարգևատրում**

1. Ա և Բ խմբերի առաջին տեղը գրաված ակումբները պարգևատրվում են փոխանցիկ գավաթներով և դիպլոմներով: Թիմերի ֆուտբոլիստները,

մարզիչները պարզևատրվում են ոսկե մեդալներով և առաջին տեղի դիպլոմներով:

2. Ա և Բ խմբերի երկրորդ տեղը գրաված ակումբները պարզևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով: Թիմերի ֆուտբոլիստները, մարզիչները պարզևատրվում են արծաթե մեդալներով և երկրորդ տեղի դիպլոմներով:
3. Ա և Բ խմբերի երրորդ տեղը գրաված ակումբները պարզևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով: Թիմերի ֆուտբոլիստները, մարզիչները պարզևատրվում են բրոնզե մեդալներով և երկրորդ տեղի դիպլոմներով:
4. Ա և Բ խմբերի հաղթող թիմի ֆուտբոլիստները և պաշտոնյաները պարզևատրվում են համապատասխան դիպլոմներով:
5. Ա և Բ խմբերի լավագույն ուրբարկուները պարզևատրվում են դիպլոմներով և հուշանվերներով:
6. Ա և Բ խմբերի լավագույն խաղացողները պարզևատրվում են դիպլոմներով և հուշանվերներով:

### **Հոդված 11. Ծախսերը**

1. Մասնակից բոլոր թիմերի ճանապարհածախսը փոխհատուցում է ՀՖՖ-ն:
2. Ա և Բ խմբերի, ինչպես նաև Գավաթի խաղարկության խաղերի միայն հյուրընկալվող թիմի սննունդը փոխհատուցում է ՀՖՖ-ն:

### **Հոդված 12. Այլ դրույթներ**

1. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշրջանի ավարտը:

## Հավելված 1

### Կանոնակարգ Հայաստանի կանանց ֆուտբոլի

#### 2018-2019թթ. Գավաթի խաղարկության

1. Հայաստանի կանաց ֆուտբոլի 2018-2019թթ. Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
2. Գավաթի խաղարկությունը սկսվում է 1/8 եզրափակչից, որին մասնկացում են Ա և Բ խմբերի թիմերը:
3. Գավաթի խաղարկությունը սկսվում է 2019թ. մայիս ամսից:
4. Գավաթի խաղարկության 1/8, 1/4 և 1/2 եզրափակիչ հանդիպումները անցակցվում են սեփական և մրցակցի դաշտերում:
5. Հաղթող թիմը որոշվում է երկու խաղերի արդյունքներով: Հավասար ցուցանիշների դեպքում առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հավասարության դեպքում երկրորդ խաղի ավարտին նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար՝ ըստ «ֆուտբոլ խաղի կանոնների»:
6. Եզրափակիչ խաղը անցկացվում է հունիսի 15-ին: Արդյունքի հավասարության դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար՝ ըստ «ֆուտբոլ խաղի կանոնների»:
7. Ա Խմբի 2017-2018թթ. առաջնության մասնակից 4 թիմերը ընդգրկվում են ըստ վիճակահանության 1/4 եզրափակչի 4 զույգերի կազմում՝ մեկական թիմ ամեն զույգի մեջ:
8. 1/8 եզրափակչում մնացած թիմերի դիրքերը խաղացանցում որոշվում են վիճակահանությամբ:

**Կանանց ֆուտբոլի բաժին**